

Վայրի ցորենի պահպանման  
կարևորությունը  
Հայաստանում



Ընդհանրապես ցորենը համարվում է կյանքի սկիզբ, քանի որ հենց նրանից կարող ենք ստանալ կենսական կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ հացը: Ցորենը միշտ եղել է Հայաստանի համար կենսական և կարևորագույն աղբյուր, ինչի մասին փաստում են կատարված պեղումները, որոնց համաձայն Հայաստանի տարածքում ցորեն աճեցրել են դեռևս 7000 տարի առաջ, անգամ ավելի վաղ՝ քան Հին Եգիպտոսում: Հարկ է նշել, որ Հայաստանը հատկապես աչքի է ընկնում մշակաբույսերի իր վայրի տեսակներով, որոնցից երեքի հայրենիքը հանդիսանում է հենց ինքը՝ Հայկական լեռնաշարհը:

1992թ. ընդունված «Կենսաբանական Բազմազանության Միջազգային Կոնվենցիան» առաջին անգամ ընդգծեց բույսերի «in situ» համակարգի առաջնահերթ դերը բուսական գենետիկական ռեսուրսների պահպանման գործում: Երեբունի արգելոցի տարածքը շատ փոքր է, մոտ 100 հա, սակայն որպես վայրի հացազգիների գենոֆոնդի պահպանության օջախ՝ յուրահատուկ է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի համար: Այստեղ պահպանվում են լեռնային քսերոֆիտ էնդեմիկ և եզակի բնական համակցություններ, որոնք կազմված են հիմնականում հացազգիներից: Արգելոցի ֆլորան շատ հարուստ է ու բազմատեսակ և ընդգրկում է մոտ 300 տեսակ: Աշխարհում հայտնի չորս վայրի տեսակներից երեքն աճում են այստեղ՝ հարյուրից ավել տարատեսակներով: Վայրի աշորայի, գարու և այծակնի տեսակները ևս առանձնանում են տեսակային և ներտեսակային բազմազանությամբ:

Երեբունի արգելոցն իր կարգավիճակը ստացել է 1981թ: Սրա նախադրյալ հանդիսացել են մի շարք հանգամանքներ կապված Հայաստանի վայրի ցորենի հայտնագործմամբ: Դեռևս 20-րդ դարի հայտնի և ականավոր բուսաբան Ն.Վավիլովը յուրահատուկ հետաքրքրությամբ է խոսում Հայաստանի հարստության մասին, որն էլ վայրի ցորեն է: Նրա նպատակն էր սնել համաշխարհային մարդկությանը՝ օգտագործելով անհետացած տեսակներ, որոնք այս դեպքում հանդսիացան մշակաբույսերի վայրի տեսակները: Օգտագործելով այս տեղեկություններն ու հավաքելով վայրի ցորենի նմուշները, հետագայում հնարավոր դարձավ նոր



տեսակների ստեղծումն ու հների՝ երկրի վրայից անհետացած տեսակների, վերականգնումը՝ նոր տեխնոլոգիաների և սելեկցիոն գործընթացների պայմաններում: Վավիլոնի օրենքի համաձայն, որը համարվում էր գենետիկների և սելեկցիոն մասնագետների



համար մեծագույն հայտնագործություն այդ թվականներին՝ “Ժառանգական փոփոխության հոմոլոգիական շարքը”, Վավիլոնը ապացուցեց վերոնշյալի իրականացման հնարավորությունը: Նա առաջինն էր, ով ստեղծեց իր պահոցը: Այն պարզապես պահոց չէր, այլ գենետիկական շտեմարան, որտեղ պահպանվում էին երկրի տարբեր աշխարհամասերից մեկտեղ հավաքված էնդեմիկ և ոչ միայն, մշակաբույսերի տեսակներ, որոնց մեջ առանձնանում են նաև այդ մշակաբույսերի վայրի տեսակները: Հենց այս վայրի տեսակներն էլ ըստ Վավիլոնի համարվում են ներկա մշակաբույսերի նախահայրերը: Իր գրքերից մեկում նա նշել է, որ տեսակների խաչասերումից հնարավոր է ստանալ երկրից անհետացած տեսակները: Իր կատարած փորձերից և բազմաթիվ շրջագայություններից նա հանգեց այն եզրակացության, որ գենետիկորեն

մոտ բույսերի փոփոխությունն էլ է նման, հետևապես հնարավոր է ստեղծել խաչասերման եղանակով նոր կենսունակ տեսակներ. գենետիկորեն մոտ տեսակներն ու ցեղերը բնութագրվում են ժառանգական փոփոխականությամբ համընկնող շարքերով այն հերթականությամբ, որ մի տեսակի սահմաններում ձևերի շարքն իմանալու դեպքում, հնարավոր է կանխատեսել այլ տեսակների և ցեղերի զուգահեռ ձևերի դիրքը:



Վավիլոնը ճանապարհորդել է հինգ մայրցամաքներով՝ ուսումնասիրելով համաշխարհային սննդային էկոհամակարգը: Անվանելով այն “ամբողջ մարդկության համար առաքելություն” նա իրականացրեց փորձեր՝ գենետիկական բազմացման ուղղությամբ, մեծացնելու համար ֆերմերային արդյունավետությունը: Ըստ Վավիլոնի, բույսերի ծագման կենտրոններից մեկը հանդիսանում է հենց Հայաստանը: Նա նշում է, որ սարերում է իրականացվել բույսերի բնական ընտրությունը և հենց այնտեղ էլ պահպանվել է նախնական տեսքը: Նույնիսկ Ռուսաստանում այդ ժամանակ ընթացող հեղափոխության, անարխիայի և սովի պայմաններում, նրան հաջողվեց հասնել հաջողությունների այս ոլորտում:

Վավիլոնը երագում էր ուտոպիական ապագայի մասին, որտեղ նոր գյուղատնտեսական պրակտիկան և գիտությունը կարող էին մեկ օր ստեղծել գեր բույսեր, որոնք կկարողանային աճել ցանկացած շրջապատում, հետևապես վերջ տալով սովին: “Նա առաջին գիտնականներից էր, ով իսկապես լսեց ֆերմերներին՝ ավանդական ֆերմերներին, գյուղացիներին, ինչի շնորհիվ նրանք հասկացան, որ սերմի

բազմազանությունն էական է իրենց դաշտերի համար”,- ասում է բուսաբան Գերի Պոլ Նաբհանը:

Այսպիսով, վայրի ցորնի առկայության կարևորությունը դեռևս էական էր խորհրդային ժամանակներից, երբ հայ բուսաբաններն իրականացնում էին հետազոտություններ: Այդ ժամանակ վայրի ցորենի ծագման հայրենիք համարվում էր Սիրիան, որտեղ երկհատիկ վայրի ցորեն հայտնաբերել էր ավստրիացի բուսաբան Կոչին 1855թ: Ավելի ուշ՝ 1906-1908թթ., Ա.Ա. Ռամսոնը վայրի ցորեն հավաքեց Սիրիայում և



Պաղեստինում: Վերջին հայտնագործությունը սենսացիա առաջացրեց, բացի այդ, կարծիք հայտնեցին, որ հենց Պաղեստինն է հանդիսանում ցորենի ծագման հայրենիքը:

Շուտով 1925-1930թթ. Երևանին շրջապատող արևմտյան և հարավ արևմտյան շրջաններում Հայաստանի գյուղատնտեսական ինիստիտուտի պրոֆեսոր Մ.Գ. Թումանյանը բացահայտեց միահատիկ և երկհատիկ վայրի ցորենի բնօրրանը: Այս բացահայտման հետ մեկտեղ վայրի ցորենի որոնումներ իրականացնում էր Ա.Գ. Արարատյանը, որոնք նույնպես պսակվեցին հաջողությամբ: Իր բացահայտումը Թումանյանն առաջին անգամ խմբագրեց 1930թ, ինչը սենսացիա առաջացրեց և իր ուրույն տեղը գտավ Վավիլոնի հետաքրքրության շրջանականերում: Երկար ժամանակ ցորենի բնօրրան համարվող Պաղեստինից բացի հայտնաբերվել են այլ վայրի ցորեններ, որոնք իրենց ուրույն տեղը պետք է գրավեին Վավիլոնի պահեստում: Հետաքրքրվելով Թումանյանի հայտնագործությամբ, Վավիլոնը որոշում է կազմակերպել հասուկ ճամփորդություն դեպի Հայաստան: Նիկոլայ Վավիլոնը միանգամից արձագանքեց լուրերին և իր խմբով ուղևորվեց Երևան՝ Բաքվով, հետագայում տարածաշրջանում այլ վայրեր ուսումնասիրելու մտադրությամբ: Իր այցելության ընթացքում Վավիլոնը հաստատեց իր համոզմունքը վայրի ցորենի վերաբերյալ և փաստեց, որ Հայաստանը համարվում է աշխարհի մշակաբույսերի բնօրրաններից մեկը:



**Վայրի ցորեն:** Համաշխարահային մասշտաբով հաստատված է միայն չորս տեսակ վայրի ցորեն՝ ներքին հսկայական բազմազանությամբ՝

1. Ուրարտական վայրի ցորենը
2. Վայրի միահատիկ ցորեն
3. Արարատյան վայրի ցորեն
4. Սիրիա-պաղեստինյան այրի երկհատիկ

Այս տեսակներից Հայաստանում աճում են առաջին երեքը:

- **Ուրարտական վայրի ցորեն (T. urartu Thum. Ex Gandil).** մինչև վերջերս այս տեսակը համարվում էր էնդեմիկ Հայաստանի համար: Միակ գտնվելու վայրը ԱՊՀ երկրների շրջանում գտնվում է Գեղարդի, Ողջաբերդի և Ջրվեժի գյուղերի շրջակայքերում և Կոտայքի մարզում: Ներկա ժամանակ ստացված են տվյալներ նրա մասին, որ Ուրարտու ցորենն աճում է այլ երկրներում նույնպես՝ Իրան, Թուրքիա, Լիբանան և Սիրիա: Ցորենի այս տեսակը վերջին շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացրել: Այն համարում են պինդ խմբի, հեքսապլոիդ կամ հացազգիների խմբի առաջացման կարևոր կոմպոնենտ: Բազմազանության տեսակները հասնում են վեցի: Նոր տեղեկությունների հետ մեկտեղ բացահայտվում են նոր առանձնահատկություններ Ուրարտու ցորենի մասին, նրա ուսումնասիրման նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջացել և հետևապես վերջինիս պահպանումն առաջնային կարևորության է հասել:



- **Վայրի միահատիկ ցորեն (Triticum boeoticum Boiss.):** Այս տեսակի միակողմակի կամ երկկողմանի ենթատեսակներն ինչպես արգելոցում, այնպես էլ Կոտայքի, Արարատյան և Վայոց ձորի մարզերում, երբեմն առաջացնում են թփեր: Բազմազանության տեսակները հասնում են մոտ 90-ի: Սակայն, մելիորատիվ և անտառային մելիորատիվ աշխատանքներն իրականացվում են այս ցորենի տեսակների և ենթատեսակների բնական տարածքում: Այս ցորենի բազմազանության տեսակներն ու ձևերն անհետանում



են: Եթե այս տեսակի մորֆոլոգիական առանձնահատկությունները քիչ թե շատ լավ են ուսումնասիրված և այդ առանձնահատկություններով հստակեցված են ենթատեսակները, ապա գենետիկական բազմազանությունը և իրենց սելեկցիոն նշանակությունն ուսումնասիրված են բավականին քիչ: Ընդհանուր առմամբ հայտնի են այնպիսի որակներ, ինչպիսիք են չորադիմացկունությունը և սնկային հիվանդությունների դիմադրողականությունը:

- **Արարատյան ցորեն կամ ենթակովկասյան վարի երկհատիկ (T. Araraticum Jakubz.):** Այս ցորենի տարածքը Հայաստանում համընկնում է ուրարտական ցորենի տարածքի հետ: Սելեկցիոն կողմնորշմամբ այս տեսակը հետաքրքրի է այնքանով, որ այն համարվում է տղամարդկային ցիտոպլազմիկ անպտղության աղբյուր: Արարատյան ցորենը համարում են վրացական Ջանդրի ցորենի (*Triticum timopheevii*) նախահայր: Ապացուցված է նաև այս ցորենի գենետիկական բազմազանությունը: Հայաստանում հաստատված են տասը ենթատեսակներ: Առկա են տարբեր ձևեր:

### Բնության մեջ վայրի ցորենի ներկա կարգավիճակը

Կոտայքի մարզի տարածքում, արգելոցի տարածքից բացի, Ջրվեժի, Գեղադիրի, Հացավանի, Գառնիի և այլ տարածքներում, անտառային մելիոլացիոն աշխատանքների հետևանքով հատկապես տարածքի այգային հորիզոնի տակ անցկացնելուց հետո, շատ տեղերում վայրի ցորենն, ինչպես նաև այլ բույսեր, անհետանում են: Սակայն, դեռ այս տարածաշրջանի տարբեր տեղանքներում հնարավոր է հետևել վայրիների բնական

աճին, հաճախ շատ հրապարակներում, հիմնականում փոքր չափերի տարածքներում առկա են առանձնացված հատվածներ՝ եզակի բույսերով:

Բ.Մ. Գարասեֆերյանը Վայոց ձորի մարզում ուսումնասիրել է մեծ մասսայական (համարյա 530հա) վայրի ցորենների աճ: Վերջին ժամանակներում մեծապես լայնացել են մելիորատիվ և անտառային մելիորատիվային աշխատանքներն այս շրջաններում: Շատ վաղ չմշակված հողատարածքները ներկա ժամանակաշրջանում դարձել են ոռոգման պիտանի և հետևապես դարձել է հնարավոր գյուղատնտեսական բույսերի մշակումը: Տարիների ընթացքում, մշակման արդյունքում, վայրի տեսակները սովորաբար անհետանում են:

Արարատյան մարզում վայրի ցորենը հայտնվում է հիմնականում սկսած Ուրցաձորի հատվածից: Շահապի ուղղությամբ գնալով նրանք անընդհատ հայտնվում են ճանապարհին, առանձին հատվածներում, փոքրիկ խմբերով՝ ծովից 1300-1400մ բարձրության վրա: Այս հատվածից այն կողմ վայրի ցորեն այլևս չի հանդիպում, սակայն շարունակվում է Լանջարայից սկսած Արարատյան և Վայոց ձորի հատվածներից:

Վերոնշյալից հետևում է, որ ամենուրեք տեսանելի է նվազման տենդենց՝ երբեմն կատաստրոֆիկ քանակներով, վայրի ցորենի բնական հատվածներում, ինչն ուղղակիորեն ազդում է գենոֆոնդի վրա: Վայրի ցորենի և այլ գենոֆոնդի պահպանման համար մեծ հույսեր կապված են Էրեբունի արգելոցի հետ:


### **Էրեբունի արգելոցի կազմակերպումը**

Թումանյանի բացահայտումից և Վավիլովի վայրի ցորենի պահմանման միջոցառումների անհրաժեշտության մասին հայտարարություններից շատ ժամանակ անցավ մինչև բացվեց Էրեբունի արգելոցը: Իրականում այդ շրջանում գնում էր վայրի ցորենի տեսակների և ավել տեղեկությունների հավաքման գործընթացը, սակայն 60-ականներին քայլեր չէին իրականացվում հատուկ տարածքների պահպանման համար: Դրա փոխարեն ուժեղացավ նրանց անհետացման վախը:





# ЭРЕБУНИЙСКИЙ ЗАПОВЕДНИК 1981



## УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

- Основные полевые разрезы
- Поляны
- ∩ Проколки
- С Сабосаменистые
- У Среднекаменистые
- ∩ Среднеэродированные
- ∩ Среднеэродированные
- ∩ Сильноэродированные
- ∩ Граница контура
- ∩ Номер контура
- ∩ Площадь контура в га
- Дом лесничего
- Проектируемая орошаемая площадь
- Проектируемая дорога
- Ограда
- Граница орошаемых земель
- Ворота

Генеральная план по разбивочным и их площади

| № п/п | Числовые обозначения | Наименование леса  | Площадь (гектары) | В % от общей площади |
|-------|----------------------|--|-------------------|----------------------|
|       |                      | КВМ - Вечнозеленый смешанный лес (Сосна, Пихта, ель, береза)                       |                   |                      |
|       |                      | ВКМ - Вечнозеленый смешанный лес (Сосна, Пихта, ель, береза)                       |                   |                      |
|       |                      | СМ - Сосново-березовый лес   |                   |                      |
| 1     | 1                    | Мелколиственные леса на супесчаных (3-5%) склонах, преимущественно березовые       | 17                | 1.9                  |
| 2     | 2                    | Мелколиственные леса на супесчаных (5-10%) склонах, преимущественно березовые      | 13.0              | 14.6                 |
| 3     | 3                    | Мелколиственные леса на супесчаных (10-15%) склонах, преимущественно березовые     | 14.0              | 15.74                |
| 4     | 4                    | Мелколиственные леса на супесчаных (15-20%) склонах, преимущественно березовые     | 17                | 1.9                  |
| 5     | 5                    | Мелколиственные леса на супесчаных (20-25%) склонах, преимущественно березовые     | 10                | 9.0                  |
| 6     | 6                    | Мелколиственные леса на супесчаных (25-30%) склонах, преимущественно березовые     | 12.9              | 14.5                 |
| 7     | 7                    | Среднеэродированные леса на супесчаных (30-35%) склонах, преимущественно березовые | 12.4              | 13.6                 |
| 8     | 8                    | Сильноэродированные леса на супесчаных (35-40%) склонах, преимущественно березовые | 24.3              | 27.5                 |
|       |                      | Итого по плану   | 880               | 100.0                |

խոչընդոտ էր համարվում: Սակայն հաշվի առնելով վայրի ցորենի և այլ մշակաբույսերի գիտական և պրակտիկ կարևորությունը որպես մեր ներկայիս մշակաբույսերի նախահայրերի կենդանի նշակության, հատկապես ցորենի, հացի, վերջիվերջո Վավիլոնի բաղձալի երազանքն իրականացվեց: 1981թ. մարտի 27-ին, Հայաստանի սովետական նախարարությունը հաստատեց արգելանոցի ստեժումը, ըստ Թումանյանի՝ երկիր մուլտրակի վրա ամենահետաքրքրի տարածքներից մեկը: Հետաքրքիր է անվան ծագումնաբանությունը, որը տրվել է մոտակայքում Էրեբունի ամրոցի անվան պատճառով: Հատկանշական է, որ Էրեբունի ամրոցը համարվում է ներկա Երևանի հիմքը՝ ստեղծված 782թ, ինչպես վայրի ցորենը համարվում է ներկա մշակաբույսերի հիմքը:



## Պահպանման և ռացիոնալ օգտագործման խնդիրը

Աճեցման պահպանման խնդիրն այդ թվում և մշակաբույսերի վայրի ազգակիցների, ավելի սուր է դրվում քան երբևէ և ստանում է հատուկ բարձր նշանակություն, քանի որ գյուղատնտեսական կուլտուրայի ներքո նոր տարածքների մարսումը, ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման հետ միասին, բնակչության աճը բերում են մշակված տեսակների ռեսուրսների նվազեցմանը: Կատարվում է արժեքավոր տեսակների տարածքների նվազեցում կամ առանձին մշակաբույսերի դեգրադացիա:

Հայաստանի ֆլորան ունի մարդկանց կողմից քիչ օգտագործվող շատ արժեքավոր տեսակներ: Նրանց են վերաբերում նաև մշակաբույսերի վայրի բարեկամները, որոնք ունեն անչափ բազմազան ժառանգական գեներ իրենց տարածման շրջանում և կարող են օգտագործվել սելեկցիոն նպատակներով: Գենետիկայի և սելեկցիայի արդյունքում պահպանումն ու ճիշտ օգտագործումը կունենան ավելի մեծ նշանակություն ապագայում,

երբ մարդկությունը օգտագործելով նոր տեխնոլոգիաներ կստանա նոր արժեքներով մշակաբույսերի ցանկալի տեսակը գյուղատնտեսական արտադրության համար: 1980թ. մարտի 5-ին շատ երկրներում, այդ թվում նախկին սովետական հանրապետություններում ընդունվեց “Համաշխարհային մարտավարությունը բնության պահպանության համար” ռազմավարությունը, որը մշակվել էր բնապահպանության միջազգային կոմիտեի կողմից: Մարտավարությունում առաջարկված նախաձեռնություններն ուղղված են երեք հիմնական նպատակների իրականացմանը բնապահպանության ոլորտում: **Առաջինը՝** կարևորագույն էկոլոգիական համակարգերի և գործընթացների պահպանումը, որոնք կապահովեն կյանքը երկրի վրա: **Երկրորդը՝** գենետիկական բազմազանության տեսակների օրգանիզմների պահպանումը: Գենոֆոնդի անվատնագությունն անհրաժեշտ է ապագայում սելեկցիոն ծրագրերի



համար: Անվտանգության կարևորությունը բոլոր գենետիկական նյութերի համար ավելի պակաս կարևոր չէ հաջողակ գիտատեխնիկական առաջընթացի, գիտության և բժշկության զարգացման համար: **Երրորդ** նպատակը՝ վայրի բնության ու էկոհամակարգերի ռացիոնալ օգտագործումն ու պահպանությունն է: Էրեբունի արգելոցը կոչված է մեր հանրապետությունում իրականացնելու այդ կարևոր դերը: Արգելանոցի կազմակերպման հետ մեկտեղ իրականացվում է լայն պրոպագանդա բուսականության պահպանման նպատակով՝ չհսկվող տարածքներում, հանրապետության տարբեր տարածաշրջաններում:

Գենետիկական հարստությունը տեսանելիորեն ներկայացնում են ցանկացած երկրի ամենաթանկ մարտավարական կարևորության կապիտալը: Հայաստանը, վերոնշյալից ելնելով, պատկանում է այն սակավաթիվ երկրներին, որոնց տարածքում դեռ պահպանվում են մշակաբույսերի վայրի ազգակիցները, որոնց պահպանության և օգտագործման խնդիրն ունի համաշխարհային նշանակություն:



Վայրի ցորենի և իր ցեղակիցների գենետիկական բազմազանության փնտրտուքները հողագործական շրջաններում, տարածքներում և նրա պահպանման հնարավորությունները դառնում են ավելի ակտուալ խնդիր: Վայրի բնությունն անհետանում է, քանի որ ընթանում է ինտենսիվ շինարարություն, փոխվում են բույսերի մշակման ավանդական տեխնոլոգիաներն ու հողագործությունը, ոռոգման բնույթը, աղտոտվում են բարձրալեռնային դաշտերը, որոնց սահմաններում հաճախ աճում են մշակաբույսերի վայրի նախնիները, այդ թվում և ցորենի ու իր ազգակիցների: Հայաստանը մտնում է նախաասիական կենտրոնի ծագման մեջ՝ իր մշակաբույսային առատության պայմաններում և բնութագրվում է տեսանելի բիոբազմազանությամբ: Հայաստանի

# AEGILOPS CYLINDRICA HOST X TRITICUM AESTIVUM L. ՀԻՔՐԻԴԻ

## ՁԵՎԱԳՈՅԱՑՈՒՄԸ



Այծակն գլանաձև Ցորեն փափուկ  
*Aegilops cylindrica* *Triticum aestivum*  
*v. graecum*

F1 F2 F4



Հեռանկարային ձևեր Պերսիկոդ  $2n=42/$  Սպելտոդ  $/2n=42/$



Նոր տեսակ - *Aegilotriticum cylindro-aestivum Gandil*.  $/2n=42/$


նկատմամբ հետաքրքրությունը որպես բազմազանության օջախի՝ հատկապես վայրի ցորենի համար, մեծ է, քանի որ ցորենի վայրի տեսակների չորսից երեքն աճում են այստեղ: 1925թ. Երևանի տարածքում առաջին անգամ հայտանբերվեց միահատիկ վայրի ցորենը՝ triticum urartu: Վայրը՝ Կոտայքի մարզի Գեղադիր, Ողջաբերդ և Ջրվեժ գյուղերում: Ներկայումս ցույց է տրված, որ այն հանդիսանում է Au գենոմի դոնորը պոլիպլոիդ ցորենների համար: Նրա բնական բնակության վայրի պահպանման համար հանրապետությունում 1980-ականներին ստեղծվեց Էրեբունի արգելոցը: Այնտեղ բացի T. urartu-ից աճում են միահատիկ ցորենի այլ տեսակ՝ T. boeoticum, երկհատիկ ( $2n=28$ ) արարատյան ցորենը (t. araraticum), այլ մշակաբույսեր, ինչպես նաև Հայաստանի համար էնդեմիկ տեսակներ:

Ընդհանուր առմամբ հաստատված է արգելոցի տարածքում ծաղկող բույսերի 300 տեսակներ: Հայաստանում կատարվեց փորձաքննական էքսպեդիացիա, որի նպատակն էր թարմացնել նախկինում ունեցած տվյալների բազան՝ վայրի ցորենի մասին Հայաստանի տարածքում, չէ որ վերջին լայնամասշտաբ ուսումնասիրությունները կատարվել էին անցած դարեվերջին: Այս էքսպեդիացիայի երթուղին կապված էր հնագույն հողագործական հատվածների և ցորենի հնարավոր մշակման տարածքների հետ: Բացի այդ, հետաքրքրություն էր ներկայացնում նրանց գենետիկական հնարավորությունների սանդղակը, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում նոր կենսունակ սորտերի ստեղծումը: Էքսպեդիացիայի նշանակությունը կապված էր վայրի բույսերի տեսակների բիոբազմազանության հնարավորությամբ՝ իրենց ժամանակակից տարածքների հստակեցման համար, ինչպես նաև ինտենսիվ հիբրիդացիայի արդյունքում գեների

տարածումը՝ *Triticum* L.-ի պայմաններում: Վայրի տեսակների մոնիտորինգը Հայաստանում վաղուց չէր իրականացվել, ինչի հետևանքով նրանց ներկա տարածքները հայտնի չէին:

Դրա համար Հայաստանում գենոֆոնդի և սելեկցիայի լաբարատորիաներում մշակված են մեթոդներ ամֆիպլոիդների ստեղծման համար՝ նրանց օգտագործման նպատակով՝ գյուղատնտեսական կարևոր ներդիրային գործողություններ իրականացնելու համար՝ հատուկ վայրի բույսերի համար ստեղծված տեսակների վրա: Էական հետաքրքրություն են ներկայացնում լաբարատորիայում ստեղծված և պահպանված մարդածին ամֆիպլոիդների ֆոնդը: Նման ամֆիպլոիդներն օգտագործվում են բույսերի նոր տեսակների ստեղծման համար կամ գյուղատնտեսական առումով կարևոր նոր համակցությունների ստեղծման համար արդեն իսկ առկա տեսակների մոտ: Լաբարատորիայում ստեղծված են և պահպանվում են՝ *T. sinskoboeoticum*, *T. boeoticourarticum*, *T. boeoticotaushii*, *T. sinskourarticum*, *Aegilotriticum taushourarticum* տեսակները: Սակայն ոչ բոլոր ամֆիպլոիդներն են համարվում կենսունակ տեսակներ, դրանցից շատերի օգատակարությունը թերևս հարցականի տակ է:

Գենոֆոնդի և սելեկցիայի լաբարատորիայում պահպանվում են էական նշանակության վայրի ցորենի տեսակների հավաքածուներ. ակադեմիկ Մ.Գ. Թումանյանի արխիվը:





Աջից ձախ: Մ.Գ. Թումանյան, Ն.Բ. Վավիլով, անձանոթ, Հայաստան, 1934 թ., Գենոֆոնդի և սելեցիայի լաբարտորիայի արխիվ, Երևան

Ակադեմիկ Ն.Բ. Վավիլովը տվել է հարցազրույց Երևան կատարած իր այցի ընթացքում, որտեղ ասվում էր հետևյալը. «Մեր գործուղման հիմնական նպատակն էր այցելել մի շարք գիտական հաստատություններ՝ գյուղատնտեսության, ինչպես նաև կուլտուրական բույսերի դրության հետ ծանոթանալու համար:

Պրոֆեսորներ Թումանյանի, Տրոցկու և մի շարք այլ գիտական աշխատողների հետ մենք այցելեցինք

Երևանին բավական մոտ գտնվող Շորբուլաղ կոչվող վայրը: Այստեղ մենք դիտեցինք խիտ աճած վայրի ցորենի ու տարեկանի տարածությունները: Բոլորովին չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ այդ ոչ մեծ տարածությունը կառաջացնի համաշխարհային հետաքրքրություն: Այստեղ կարելի է դիտել, ուսումնասիրել հացաբույսերի և ընդհանրապես երկրագնդի բուսականության աստիճանական զարգացումը: Վայրի ցորենի տարածության հայտնաբերումներով գիտական աշխարհը պարտական է միմիայն պրոֆեսոր Գ. Թումանյանի եռանդուն ու մեծ աշխատանքին: Ես համոզված եմ, որ երբ այդ տարածքի մասին իմանա գիտական աշխարհը, ապա երկրագնդի զանազան մասերից անըդհատ գիտական էքսպեդիցիաներ են գալու դեպի Շորբուլաղ, այդ չափազանց հետաքրքիր վայրն ուսումնասիրելու համար:

Կասկածից վեր է, որ տեսակների բազմազանությամբ դա ամենից հետաքրքիր տեղն է ողջ աշխարհում: Ինձ վիճակվել է ուսումնասիրել բազմաթիվ երկրներ, որոնք ընդունված է համարել հնադարյան երկրագործական երկրներ, սակայն կրկնում եմ, ավելի հարուստ, ավելի հետաքրքիր վայր քան Շորբուլաղն է՝ դժվար է գտնել:

Մոտ ժամանակներում գումարվող սելեկցիայի համաշխարհային կոնֆերանսում ես պատմելու եմ պրոֆեսոր Թումանյանի այդ հայտնագործության մասին և անպայման կառաջարկեմ էքսպեդիացիա իրականացնել դեպի Երևան՝ այդ հողամասն այցելելու, նրա վրա աճող բազմապիսի վայրի ցորենների տեսակներին ծանոթանալու համար”:<sup>1</sup>

---

<sup>1</sup> Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):